

**ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 3-րդ աշխատաժողովի**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն թվականի հոկտեմբերի 26-ին, Անի Պլազա հյուրանոցի Անի հանդիպումների սրահում (Հասցե՝ Սայաթ-Նովայի պող., 19 շենք, Երևան, Հայաստան) տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ **Հարթակ**) 3-րդ աշխատաժողովը:

**Աշխատաժողովի օրակարգը՝**

Ժամը	Աշխատանքը
09:30-10:00	Մասնակիցների գրանցում
10:00-10:15	Ողջույնի խոսք <i>Գառնիկ Պետրոսյան, ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն</i> <i>Աշոտ Գիլոյան, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</i> <i>Թորիաս Վիթման, ԿԻԿ ծրագրի Հայաստանյան ղեկավար</i>
10:15-10:30	Օրակարգի ներկայացում, Հարթակի նոր գործընկեր կազմակերպությունների ներկայացում <i>Վարդան Համբարձումյան, ՌԶԳ ՀԿ</i>
10:30-10:45	ԿԻԿ ծրագրի արոտավայրերի կառավարման բաղադրիչի ընդհանրացում <i>Աստղիկ Դանիելյան՝ Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն</i>
10:45-11:15	Դեգրադացված բնական կերային հանդակների (արոտավայրերի խոտհարքների) բարելավման միջոցառումների փորձարկման արդյունքների ներկայացում՝ հիմնված «Հայաստանի դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրերի խոտհարքների) բարելավմանն ուղեցույցի» վրա <i>Գագիկ Թովմասյան՝ ՀԱԱՀ, Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ</i>
11:15-11:45	Հարց ու պատասխան
11:45-12:15	Սուրճի ընդմիջում

12:15-12:45	Դեգրադացված արոտավայրերի բարելավման ձեռնարկի փորձարկման պիլոտի և այդ շրջանակներում ծախս-շահույթ գնահատման արդյունքների ներկայացում <i>Վահե Մամբրեյան՝ ԱՄ Փարթնրրգ Քոնսալթինգ Քամինի ՄՊԸ</i>
12:45-13:15	Քննարկում, հարց ու պատասխան
13:15-14:15	Ճաշ
14:15-14:30	ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման գաղափարի ներկայացում <i>Աստղիկ Դանիելյան՝ Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն</i>
14:30-14:45	Հարց ու պատասխան
14:45-15:15	Արոտների կայուն կառավարմանը խոչընդոտող խնդիրները <i>Գագիկ Թովմասյան՝ ՀԱԱՀ, Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ</i>
15:15-15:30	Հարց ու պատասխան
15:30-16:00	Սուրճի ընդմիջում
16:00-16:10	Հարթակի էլեկտրոնային տեղեկատվական պլատֆորմի ստեղծման հայեցակարգի ներկայացում <i>Աննա Պողոսյան՝ Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ</i>
16:10-16:20	Քննարկում, առաջարկություններ, հարց ու պատասխան
16:20-16:30	Միջոցառման ամփոփում

**Հանդիպման մասնակիցները՝**

1. Գառնիկ Պետրոսյան- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
2. Աշոտ Գիլոյան- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
3. Թորիաս Վիթման- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
4. Աստղիկ Դանիելյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
5. Իրինա Բալասյան- Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
6. Գեորգի Խաչատրյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
7. Կարեն Թորոսյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
8. Կամո Խաչատրյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
9. Մկրտիչ Այվազյան - Ռազմավարական զարգացման գործակալություն
10. Կարինա Հարությունյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
11. Վարդան Համբարձումյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
12. Գագիկ Թովմասյան- Ռազմավարական զարգացման գործակալություն, ՀԱԱՀ
13. Աննա Պողոսյան- Ռազմավարական զարգացման գործակալություն

14. Ռուդիկ Նազարյան- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
15. Արթուր Բաղդասարյան- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
16. Քրիստինա Խանոյան - ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
17. Հռիփսիմե Բաբայան- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության
18. Ոսկեհատ Գրիգորյան- ՀՀ Բնապահպանության նախարարություն
19. Գայանե Նիկողոսյան- ՀՀ Բնապահպանության նախարարություն
20. Տաթև Եղիազարյան – ՀՀ Տարածքային զարգացման հիմնադրամ
21. Արուսյակ Ալավերդյան- «Համաշխարհային Բանկ» Երևանյան գրասենյակ
22. Զառա Ալլահվերդյան- Հարավային Կովկասում շվեդարական համագործակցության գործակալություն
23. Նորա Ալանակյան- Ավստրիայի զարգացման գործակալություն
24. Հովիկ Մայադյան- Միավորված Ազգերի Զարգացման ծրագիր
25. Արման Օհանյան- Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն (CARD) հիմնադրամ
26. Լուսինե Նալբանդյան- «ՕՌՎԱԿՕ» հայ-նորվեգական համատեղ ձեռնարկություն
27. Անդրեաս Մելիքյան- ՀՀ Ազգային Ագրարային համալսարան
28. Աիդա Իսկոյան- ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետ, Էկոլոգիական իրավունքի կենտրոն
29. Վահե Մամբրեյան-ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ
30. Յուլյա Հովհաննիսյան-Մարալանջի համայնքապետարան
31. Սմբատ Պետրոսյան- Ծաղկահովիտի համայնքապետարան
32. Ռուբեն Մանուչարյան- Սիսիանի համայնքապետարան
33. Արտյոմ Գրիգորյան- Գորայքի համայնքապետարան
34. Գագիկ Խաչատրյան- Սյունիքի մարզպետարան

Աշխատաժողովին մասնակցեցին և իրենց ողջունի խոսքերով հանդես եկան ՀՀ գյուղատնտեսության, ինչպես նաև տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների ներկայացուցիչներն ու ԿԻԿ ծրագրի հայաստանյան թիմի ղեկավարը:



Գյուղատնտեսության նախարարի տեղակալի պաշտոնակատար Գառնիկ Պետրոսյանը ողջունեց և բոլորին մաղթեց բեղմնավոր աշխատանք: Նա շեշտեց, որ հարթակի հիմնադրումն ու գործունեությունն ի սկզբանե համարում է դրական, կարևորեց հարթակի դերը ոլորտի խնդիրների կարգավորման հարցում և հույս հայտնեց, որ **Հարթակի** անդամ յուրաքանչյուր կազմակերպություն իր ներդրումը կունենա Հայաստանում գյուղատնտեսության զարգացման գործում՝ կարևորելով ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակումը:

«Շատ եմ կարևորում այն փաստը, որ **Հարթակին** միանում են նոր գործընկերներ: Ոլորտում աշխատող միջազգային և տեղական կազմակերպությունների այսպիսի համախումբը արդեն իսկ **Հարթակի** ձեռքբերում է, որը հպարտանալու առիթ է ընձեռում», - իր ողջունի խոսքում նշեց Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչություն պետ՝ Աշոտ Գիլոյանը: Պրն. Գիլոյանը նաև հավելեց, որ շատ լավ պատկերացում է արոտագտագործման հետ կապված բոլոր դժվարություններն

ու խնդիրները, քանի որ ինքն էլ ժամանակին զբաղվել է անասնապահությամբ:

Բացման խոսքով հանդես եկավ Վ. Համբարձումյանը՝ ներկայացնելով աշխատաժողովի ընթացքը, քննարկվող խնդիրները, նոր գործընկերներ կազմակերպություններին և բանախոսների ներկայացումները, ըստ հերթականության:

Նոր գործընկեր կազմակերպությունները պաշտոնապես ներկայացվեցին և նրանց հանձնվեց **Հարթակին** միանալու փաստաթղթերը: Նոր գործընկեր կազմակերպություններն են՝ ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամն ու «ՄԱԶՕ հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը Հայաստանի հյուսիս արևելյան լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը: Գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին **Հարթակին** միանալու հնարավորության ընձեռման համար, հավելելով, որ հնարավոր կլինի հասնել ոլորտում շոշափելի արդյունքների համատեղ ջանքերի համադրման շնորհիվ:



Ողջույնի խոսքից հետո ներկայացվեցին՝ ԿԻԿ ծրագրի «Արտոտավայրերի կայուն կառավարում» բաղադրիչի ընթացիկ արդյունքները՝ մասնավորապես դեգրադացված արտոտավայրերի բարելավման ձեռնարկի փորձարկման պիլոտի և այդ շրջանակներում ծախս-օգուտ գնահատման արդյունքները:

Յուրաքանչյուր ներկայացում ուղեկցվում էր հարցերի և առաջարկությունների համար նախատեսված ժամանակահատվածով: Իրենց հարցերով և առաջարկություններով հանդես եկան միջոցառմանը մասնակցող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:





Աշխատաժողովին մասնակցում էին նաև պիլոտային ծրագրի թիրախային բնակավայրերից մասնակիցներ՝ Շիրակի, Արագածոտնի և Սյունիքի մարզերից: Որոնցից յուրաքանչյուրն օրինակներ բերեցին իրենց համայնքի ներգրավվածության վերաբերյալ, և կարևորեցին ծրագրի գործողություններն ու արդյունքում գրանցած ձեռքբերումները, ինչպես նաև աշխատանքների ընդլայնման նկատմամբ հետաքրքրությունը:



Հաջորդիվ ներկայացվեցին Հարթակի աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ընթացիկ արդյունքները՝ մասնավորապես ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման գաղափարը, արոտների կայուն կառավարմանը խոչընդոտող վերհանված խնդիրները համայնքային մակարդակում ու օնլայն տիրույթում տեղեկատվական գործիքակազմի ստեղծման հայեցակարգը:



Հանդիպման արդյունքում արոտների կայուն կառավարման գործընթացի շահագրգիռ կողմերը համաձայնության եկան ի գիտություն ընդունել և հանդիպման ընթացքում վերհանված առաջարկությունները և ձեռք բերված համաձայնությունները:

**Առաջարկություններ և հանձնարարակներ, եզրակացություններ.**

Թեմա	Առաջարկություններ և ձեռք բերված համաձայնություններ, եզրակացություններ
<p>Դեգրադացված արոտավայրերի բարելավման ձեռնարկի փորձարկման պիլոտի և այդ շրջանակներում ծախս-օգուտ գնահատման արդյունքներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Մշակված մեթոդաբանությունը անհրաժեշտություն է և օգտակար ու միանշանակ պետք է կիրառվի</li> <li>- Ծրագրի ընթացքում արոտավայրերի գնահատման արդյունքներով նպաստել նաև բուսական աշխարհի հաշվառմանը,</li> <li>- Աշխատել ծրագրերի շարունակականության և ծրագրային միջամտությունների տարածքային ընդլայնման ուղղությամբ,</li> <li>- Մշակել համայնքների ներգրավվածության համար մոտիվացիայի բարձրացման մեխանիզմներ</li> <li>- Անհրաժեշտ է զարգացնել տեղական սերմնարտադրությունը՝ կարևորել նման աշխատանքներում տեղանքին բնորոշ բուսատեսակների տեղական սերմերի օգտագործումը</li> </ul>
<p>ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի մշակման գաղափարը ու արոտների կայուն կառավարմանը խոչընդոտող վերհանված խնդիրները համայնքային մակարդակում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգի նախնական տարբերակը շրջանառել աշխատաժողովի մասնակիցների շրջանում</li> <li>- Շարունակել խնդիրների վեր հանումը և քննարկումը մարզային և ազգային մակարդակներում</li> <li>- Մշակել արոտների և խոտհարքների կայուն կառավարման հայեցակարգ, որը կներառի բնական կերհանդակների կառավարման և օգտագործման արդյունավետ մեխանիզմներ, ինչպիսիք են՝ արոտօգտագործման պլանի մշակումը և վերահսկողության սահմանումը հերթափոխային արածեցման գրաֆիկներին համապատասխան արոտօգտագործումն իրականացնելիս</li> </ul>
<p>Օնլայն տիրույթում տեղեկատվական գործիքակազմի ստեղծման</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Կայքում ունենալ բաժին՝ ոլորտին վերաբերող օրենսդրական ակտերի, միջազգային կոնվենցիաների և օրենսդրական նախագծերի ավելացման համար</li> </ul>

<p>հայեցակարգը</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Օնլայն տիրույթում տեղեկատվական գործիքակազմի ստեղծման հայեցակարգի նախնական տարբերակը շրջանառել աշխատաժողովի մասնակիցների շրջանում</li> </ul>
<p>Այլ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Տրամադրել աշխատաժողովների ընթացքում քննարկման ենթակա նյութերը բոլոր մասնակիցներին նախապես՝ մինչև հանդիպումը</li> <li>- Առաջարկ արվեց, որպեսզի <b>Հարթակը</b> աշխատի ոլորտը կարգավորող իրավական և մեթոդական կանոնակարգերի մշակման ուղղությամբ նույնպես:</li> </ul>

Վերջում, Վ. Համբարձումյանը ամփոփեց հանդիպման արդյունքներն ու հետագա քայլերը և շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին աշխատաժողովին մասնակցելու և ակտիվ քննարկման համար:

Համակարգման հարթակի երրորդ աշխատաժողովի վերաբերյալ [անդրադարձ](#) է հրապարակվել ՀՀ տարածքային կառավարման զարգացման նախարարության պաշտոնական էջում և [տեսանյութ](#) ՀՀ Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամի պաշտոնական էջում: